

ամբողջովին բացվեց ձիթհանի ջոթքարը¹⁸։ Շուրջանակի հղկված են քարի եզրերը, կենտրոնում 14×37 սմ չափերով քառանկյունաձև փոսն է, որն ունի շուրջ 10 սմ խորություն։ Քարի քառանկյունաձև փոսի կենտրոնում շուրջ 20 սմ տրամագիծ ունեցող շրջանաձև բացվածքն է, որը ծառայում էր ձիթհանի քարը մեջտեղում բարձրացող ձողին ամրացնելու համար։ Զոթքարի մակերեսին փորված արձանագրությունը քարի եզրից 10 սմ ներս ժառգված նաձև եղրագծով շրջանակավորում է քարի ողորկ, լավ մշակված երեսից շուրջ 2 սմ բարձր քանդակված 17 սմ լայնությամբ մի ժառգված, որի վրա խոշոր և գեղեցիկ տառերով փորագրված է վանքապատկան արտադրական շենք, ձիթհան կառուցելու մասին առաջին եզակի շինարարական արձանագրությունը (նկ. 3)։ Փորագրողը, նկատի առնելով քարի կլոր տեսքը, արձանագրությունը գեղեցիկ է եզրով, ժառգված նաձև։ Արձանագրության սկիզբը թեև բավականին հողմնահարված է, սակայն պարզ կարդացվում է։ Դժվարընթեռնելի են փակագրերը։ Արձանագրությունն ասում է. Ի ԹՎ ։2ԺԵ։

(1266) Ի ՊԱՐՈՆՈՒԹԵՆ ՈՐԴՈՅ ՄԱՐԾՊԱՆԱ ՎԱՐՀԱՄ ԵՒ ՄԱՄԻԿՈՆ ՇԻՆԵԱԼ ԱՐԴԵԱՄ[Բ]Ք Ի ՎԱՐԳԱՊԵՏԷ ԳՈՐԳԱ։

Արձանագրության տողերը տեղեկացնում են, որ ձիթհանը կառուցվել է Բարձրաքաշի Ս. Գրի-

գոր վանքի արձանագրություններում բաղմիցս հիշատակվող, Տաշիր գավառում հաստատված Մամիկոնյանների նախարարական տան նշանավոր ներկայացուցիչ Մարծպանի Վահրամ և Մամիկոն որդիների պարտություն ժամանակ, Գորգ վարդապետի կողմից։

Արձանագրության մեջ հիշատակվածը, ակնհերևարար, այն վարդապետ Գորգն է, որը Գսեղ գյուղի գերեզաճայաց ձորում գտնվող Քառասնից մանկանց եկեղեցու XIII դարի արձանագրությունների համաձայն եղել է այդ վանքի առաջնորդը։

Հայաստանում, Անի քաղաքի և Լոռի ձիթհաններից բացի, միջնադարյան հնավայրերում հայտնի ձիթհաններից առավել նշանակալից են Մշկավանք և Գեղարդ վանքերի ձիթհանների տրորող քարերը, որոնք, սակայն, արձանագրություններ չունեն։ Զիթհանների վերաբերյալ տեղեկությունները մեզ են հասել Այրարատ, Սյունիք, Գուգարք և այլ նահանգների բազմաթիվ գավառներից, որը ցույց է տալիս, որ կտավատի ցանքերը ընդարձակ տարածություններ են զբաղեցրել մասնավորապես նախալեռնային շրջաններում¹⁹։ Այդ տեղեկությունները մեկ անգամ ևս ընդգծում են կտավատի մշակության և ձիթագործության կարևոր դերը միջնադարյան Հայաստանի տնտեսության մեջ։

Գ. ԿԱՐԱՆԱՆՅԱՆ

¹⁸ Գսեղ գյուղի Բարձրաքաշի ձիթհանը հողից մաքրելու աշխատանքները կատարել են Կիրովականի մանկավարժական ինստիտուտի 1977 թ. շրջանավարտներ Ռ. Մխիթարյանը, Ս. Մաքսիմյանը, Գ. Ուրգույանը, Պ. Քոչինյանը և Ա. Վերաբյանը։

¹⁹ Կտավատի մշակությունը Շիրակում, Տաշիրում, Վայոց ձորում և Հայաստանի այլ նախալեռնային շրջաններում տարածում է ունեցել բնագծայ մինչև XX դարի առաջին տասնամյակները։

ԱՐՏԱՇԵՍ Ի-Ի ԵՎՍ ՄԵԿ ՆՈՐԱԴՅՈՒՏ ԱՐԱՄԵԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սպիտակի մերձակայքում 1977 թ. ամռանը հայտնաբերված արձանագիր քարը, որ, ինչպես պարզվել է, հանդիսանում է Արտաշես I թագավորի սահմանաքարերից մեկը՝ արամեական արձանագրությամբ, նման է նախորդ տարիներին գտնվածներին¹։ Կոթողը լայնանում է գեպի վերև ու ավարտվում երեք բնորոշ կոորացող ատամներով, ներքևում ունի նույնչափ բնո-

րոշ մի պոչուկ, որի օգնությամբ կանգնեցվում էր բառակող քարե պատվանդանի վրա՝ հայտնի առայժմ միայն Մովսես Խոթենացու նկարագրությունից։ Քարի ընդհանուր բարձրությունը 107 սմ է, պատրաստված է տեղական սև կարծր տուֆից։

Արձանագիր նման կոթողներ շատ են գտնվել Հայաստանում։ Այսօր նրանց թիվը 9-ի կամ 10-ի է հասնում։ Կոթողների մի առանձին խումբ են կազմում Սևանի ավազանում գտնվածները. Կամոյի շրջան՝ Կարմիր գյուղում (Ղուլալի), Մարտունիի շրջան՝ Կոնուբում կամ Ալրերգում (Ղարանլուխ), Վաղաշենում, Լիճքում, Ծակքարում։ Մի կոթող գտնվել է հարավում՝ Զանգեզուրում, Իշխանասար լեռան ստորոտում, Սի-

¹ Քարը գտել է դասախոս Ն. Դավթյանը։ ՏՆՍ Ա. Ք ա լ ա ն թ ա ռ յ ա ն, Գ. Ս ա ռ գ ը ս յ ա ն, Ի. Ղ ա ռ ի ռ յ ա ն, Արամեերեն արձանագրություն. Նորահայտ հուշարձաններ՝ Սպիտակի շրջանում, «Սովետական Հայաստան», 17 հուլիսի 1977։

սիանից Գորիս տանող խճուղուց ոչ հեռու՝ Երկու այլ կոթող հայտնաբերվել են Դիլիջանի ու Իջևանի միջև, Թեղուտ գյուղի մոտ՝:

Կոթողի հայտնաբերման վայրը, մյուսների համեմատությամբ, ամենահյուսիսայինն է Հայաստանում: Գրություն ձևով նրա արձանագրությունը նմանվում է թե՛ Սևանի արձանագրությունների, և թե՛ Զանգեզուրի արձանագրության տառանիշերին, հատկապես վերջինների անկյունավոր և լայն բնույթին: Զիզղագաձև, երկարավուն նունը, բնորոշ գլխիկով բերք, բերի և բեշը յուրահատուկ կապերը, փոքր վավր՝ վերևի մասում թեք գծիկով, նման են Սևանի արձանագրությունների համապատասխան տառանիշերին, անկյունավոր իոֆր և կլորավուն թևոր՝ Զանգեզուրի արձանագրության համապատասխան տառերին: Սպիտակի արձանագրության մի շարք տառաձևեր, ինչպիսիք են ալեֆը, դալերը, գալնը, ֆաֆը, խերը, միմը, սամեֆը, բեշը, տավը, ընդհանուր են Արտաշեսի մյուս բոլոր արձանագրությունների համար: Որոշ տառանիշերի ձևերը հատուկ են միայն այս արձանագրությանը՝ սեպաձև յոդը, տողի վերևում տեղադրված կլորավուն լամելը, մասամբ նաև թեք դրված շինը (այն իր դիրքով հիշեցնում է նաև Կի Ռուստեմի, էլեֆանտինայի և Արաբիսոնի արձանագրությունների նույն տառերին): Ընդհանուր առմամբ Սպիտակի կոթողի արամեական արձանագրությունը հիշեցնում է հին՝ մ. թ. ա. II դարի և դրանից էլ վաղ ժամանակաշրջանով թվագրվող գրության ձևերը: Եւ, հավանաբար, աքեմենյան կայսրության դիվանատանը կիրառություն գտած արամեական գրության ձևերից սերող տարբերակներից մեկն է, բայց առավել ակնհայտ է թվում նրա ազդակցությունը Կապադովկիայի կամ Կիլիկիայի Արաբիսոն վայրի մ. թ. ա. III—II դդ. արձանագրությունների հետ, որով մի անգամ ևս հաստատվում է արտաշեսյան արձանագրությունների տառանիշերի և փոքրասիական արամեական արձանագրությունների նմանության մասին Ա. Բորիսովի գիտողության ձգմարտացիությունը²: Հայաստանի կապը Փոքր Ասիայի հետ, մշակութային բազմաթիվ այլ գրականություններ ունենալուց բացի, իր ակունքներով հասնում է աքեմենյան ժամանակաշրջանին: Վերջերս պարզ-

վել է, օրինակ, որ աքեմենյանների օրոք Հայաստանը մտնում էր փոքրասիական զինվորական շրջանի մեջ:

Կայսերական դիվանատան հնագրական ավանդույթին հետևող Արտաշեսի արձանագրություններում հավաստված գրության ձևերը ա-



Սպիտակի արամեական արձանագրությունը

վելի ուշ փոխարինվում են նոր ոճի տառերով, ինչպես երևում է Սիսիանի մ. թ. ա. I դարի և Գառնիի մ. թ. II—III դդ. նաև Վրաստանի արձանագրություններից, որոնք, ըստ Ա. Փերիխանյանի, նման են Հյուսիսային Միջագետքի ու Հյուսիսային Ասորիքի արձանագրությունների հնագրական բնույթին⁴:

² Այս արձանագրությունների մասին գրականությունը տե՛ս A. Perikhanian, Les inscriptions araméennes du roi Artachès, „Revue des Études Arméniennes“, 1971, հատ. VIII, էջ 169, ծան. 2:

³ А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, № 2, էջ 98—100:

⁴ А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, «Материалы по истории Армении», 1964, № 3, էջ 126: նույնի՝ Inscription araméenne gravée sur une coupe d'argent trouvée à Sisian (Arménie), „Revue des Études Arméniennes“, 1971, հատ. VIII, էջ 5—8:

Նորո ռճի տառանիշերի մուտքը Հայաստան տեղի է ունենում մ. թ. ա. I դարում, երբ հայաստրական փոխհարաբերությունները նոր փուլ են թևակոխում իրեն հետևանք Տիգրան II-ի քաղաքական և սոցիալ-տնտեսական հանրահայտ միջոցառումների:

Արձանագրությունը, որ բաղկացած է վեց տողից, վերծանվում և թարգմանվում է այսպես.

Առաջին տողում կարգում ենք՝ RTIŠS—Արտաշես արքայի անունը: Ուշադրության արժանի է անվան նոր կերպարը: Եթե Սեանի և Զանգեզուրի արձանագրություններում այդ անունը հանդիպում է Արտախշասի (կարելի է կարդալ և Արտախշայասի) ձևով, որն Արտաքսեիքսես անվան պարսկական ձևն է, իսկ Թեղուտի արձանագրություններում՝ Արտաքսեիքսես, որը նույն անվան հունական վերարտադրությունն է, ապա Սպիտակի արձանագրությունում անունը, նույն պարսկական կերպարն ունենալով հանդերձ, առանց վերջին յոդի է՝ Արտախշաս, վկայված նակշ-ի Ռուստեմի մ. թ. ա. III դարի արձանագրությունում⁵, և որը արդեն ավելի մոտ է հայկական Արտաշես ձևին:

Երկրորդ տողում կարգում ենք՝ MLK RWNDKN—արքա, Երվանդունի: Սեանի արձանագրությունների նմանությամբ IVALN—արքա գոյականը անորոշ ձևով է պատկերված, իսկ «րավանդական» Երվանդունի տոհմանունը՝ առանց սկզբնական ալֆի: Զանգեզուրի և Թեղուտի արձանագրություններում «մելեք» և «րավանդական» բառերի միջև կա ալֆ տառը: Ա. Փերիխանյանի կարծիքով այն վերաբերում է «րավանդական» տոհմանվանը, որը պետք է կարդացվի արավանդական⁶: Բացառված չէ նաև (ըստ Բ. Նավեհի), որ վերոհիշյալ ալֆը «մելեք» բառի վերջին տառն է, որով այն ստանում է նման դեպքերում արամեերենին հասուն մալֆա որոշյալ ձևը⁷: Այս պարագայում առանց նախահունչ ձայնավորի «րավանդական» ձևը ուժի մեջ է մտնում: Այդ երևույթը, էդ. Աղայանի համոզմամբ, իր հաստատումն է գտնում հին հայերենի բարբառների որոշ խմբերում⁸:

⁵ И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армени, ВДИ, 1955, № 2, էջ 170:

⁶ А. Периханян, Арамейская надпись из Зангезура, «Мատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 121:

⁷ А. Perikhanian, Les inscriptions araméennes du roi Artachès, «Revue des Études Arméniennes», 1971, հատ. VIII, էջ 174:

⁸ Է. Դ. Աղայան, Բարբառային հնագույն

Երրորդ տողում կարգում ենք՝ TB' BR—վեհր (բարին), որդի: Բարի կամ վեհ պատվանունը մտնում է Արտաշես թագավորի տիտղոսաշարի մեջ. Զանգեզուրի արձանագրությունում հանդիպում է իր անորոշ՝ TB ձևով, իսկ Թեղուտի արձանագրությունում՝ TBY ձևով, որը հավանաբար որոշյալի սխալ գրանցումն է: BR—որդի բառը հանդիպում է բոլոր արձանագրություններում և անմիջականորեն կապվում է հաջորդ տողի հետ:

Չարորդ տողում կարգում ենք՝ ZRYTR MHLQ—Զարեհի, բաժանող: Վաղուց պարզված է, որ Զարիտար անվան տակ պետք է հասկանալ Արտաշես թագավորի հորը՝ Զարեհին: Անունը վերարտադրված է ավանդական, այսպես կոչված, պատմական (աթեմենյան) ուղղագրությամբ, այնպես, ինչպես որ մենք այն հանդիպում ենք Արտաշեսի մյուս արձանագրություններում, բացառությամբ Զանգեզուրի արձանագրության, որտեղ նույն անունը հնչյունական ուղղագրությամբ Զարեհր ձևով է գրանցված: Ա. Փերիխանյանի կարծիքով այդ ձևն արտահայտում է միջին մարական արտասանությունը⁹ և, ինչպես դժվար չէ կռահել, ավելի մոտ է հայկական ձևին: Ուշադրության արժանի է, որ Թեղուտի և Զանգեզուրի արձանագրությունների նմանությամբ Զարեհի որդի (BR ZRYTR) կառուցվածքը ճիշտ է արամեերենի քերականության կանոնների տեսակետից (սեռական հոլով արտահայտող BR—որդի գոյականի այսպես կոչված զուգակցված ձևը՝ status constructus + հասուն անունը): Այդ կանոնի խախտումը մեզ հայտնի է Սեանի արձանագրություններից, որտեղ BR ZRYTR բառերի միջև խցկված է սեռական հոլովի ZY մասնիկը, որի առկայությունը լրիվ ավելորդ է, քանի որ սեռական հոլովի իմաստը կրկնակի անգամ է արտահայտվում¹⁰:

«Մխալաք»-ը բաժանել, բաժանում կատարել բայի դերբայական ձևն է: Նախորդ բոլոր արձանագրություններում այն հանդես է գալիս անցյալ կատարյալի (պերֆեկտի) եզակի երրորդ դեմքով՝ «խալաք»—բաժանեցի, բաժանում կատարեցի իմաստով: «խալաք» բայի սկզբում, առաջին անգամ Սպիտակի արձանագրությունում հանդիպող միմբ նրան դերբայական իմաստ հաղորդող բառափոխիչ, բառակազմիչ նախամասնիկն է:

տարբերություններ հայերենում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 5, էջ 72:

⁹ А. Периханян, Арамейская надпись из Зангезура, էջ 109:

¹⁰ А. Я. Борисов, նշվ. աշխ., էջ 101-102:

Հինգերորդ տողում կարդում ենք՝ RQ BZNY B: «Արաք»-ը հող գոյական անվան անորոշ ձևն է: Այն առաջին անգամ հանդիպեց Սևանի Մակեթարի լավ պահպանված արձանագրությունում¹¹ և ապա Զանգեզուրի և Թեղուտի արձանագրություններում:

Տառերի հաջորդ խումբը կազմված է տարածքային իմաստ հաղորդող B—«մեջ» տեղի նախդիրից և ZNH (H-ի փոխարեն այստեղ հանդիպող յոդը պետք է վրիպակ համարել)¹²—«այս» ցուցական դերանունից: Խոսքի երկու մասերի համագրությունը՝ BZNH ընդունված է հասկանալ որպես «այստեղ» (բառացի՝ սրա մեջ, սրանում) մակրայն: Սակայն բացառված չեն և այլ ընթերցումներ, որոնք մեծ մասամբ կախված են Z-ին հաջորդող տառանիշի ճիշտ վերծանումից, քանի որ նրա տակ կարելի է տեսնել ոչ թե նուն, այլ Բաֆ տառը (նուն-ին հատուկ զիգզագաձև գծի փոխարեն ցանկության դեպքում կարելի է Բաֆ տառին բնորոշ գլուխը տեսնել): Եման դեպքում տառերի ամբողջ խումբը հնարավոր է կարդալ BZKY, որը նույնպես «այստեղ» կամ «սրա մեջ» (արամեական ճիշտ ձևը՝ BZK) մակրայի իմաստը կարող է ունենալ, քանի որ ZKY նշանակում է «այս» կամ «այն» և B նախդիրի օգնությամբ ստանում է տեղի իմաստ:

Հիշատակենք նաև ընթերցման վերջին, ճիշտ է բավական հազվագյուտ, հնարավորությունը, ըստ որի տառերի հիշյալ խումբը կարելի կլինի կարդալ BZK, ավելի ճիշտ՝ BZKY, համազոր «որ» հարաբերական դերանվանը¹³:

Տողի վերջում նշմարվող B նիշը, որը, մեր կարծիքով, «մեջ» նախդիրն է, հավանաբար անմիջականորեն առնչվում է հաջորդ տողում գրված բառի հետ:

Վերջին, վեցերորդ տողում ընթերցվող տառերը ավելի անփութորեն են փորագրված, ուստի թվում է թե այստեղ ավելի դժվար է կողմնորոշվել: Սակայն հաշվի առնելով արտաշեսյան արդեն հայտնի արձանագրությունների տվյալները, կարելի է տարբերել Q և R տա-

ռանիշերը: Նրանք վերարտադրված են կապգրի ձևով և գուցե այդ է պատճառը, որ այստեղ կան լրացուցիչ հորիզոնական և ուղղահայաց գծեր, որոնք չեն իմաստավորվում: Հնարավոր է Բաֆ տառի փոխարեն կարդալ Ռե տառը, բայց այդ դեպքում որևէ հասկանալի բան չի հաջողվում ընթերցել: Ուստի մյուս արձանագրությունների նմանությամբ կարդում ենք QR[Y] — գյուղ ոչ լրիվ գրված բառը, որը նախորդ տողի վերջի B տեղի նախդիրի հետ միասին ստանում է «գյուղում», «գյուղի մեջ» իմաստը:

Արտաշես I-ի մյուս սահմանաքարերի նմանությամբ Սպիտակի կոթողի վրա բացակայում է գյուղի անունը, թեպետ տեղը այդ անվան համար ազատ է թողնված: Թերևս գրիչները դժվարացել են հայկական գյուղերի անունները արտաբերել արամեական տառերով:

Արձանագրության ամբողջական տառագար-ձույթները և թարգմանությունը հետևյալն է.

- | | |
|----------------|------------------------------------|
| 1. RTHSS | Արտաշես |
| 2. MLK RWNDKN | արքա, Երվանդունի |
| 3. TB'BR | վեհր, որդի |
| 4. ZRYTR MHILQ | Զարեհի, բաժանող |
| 5. 'RO BZNY B | հողը, այստեղ, (այս-ինչ) գյուղի մեջ |
| 6. QR [Y] | |

Սպիտակի արամեական արձանագրության ընթերցումից երևում է, որ այն Արտաշես I-ի մյուս արձանագրությունների նմանությամբ բաղկացած է երկու որոշակի մասերից՝ թագավորի տիտղոսաշարից և միջոցառումն ազդարարող գործնական մասից: Զանգեզուրի և Թեղուտի արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ սահմանաքարերի վրա Արտաշես I-ը հանդես է գալիս երկու տիտղոսաշարերով՝ մեկն ընդարձակ, մյուսը՝ համառոտ: Ընդարձակ տիտղոսաշարը մեզ հայտնի է Զանգեզուրի և Թեղուտի արձանագրություններից. «Արտաշես, արքա, Երվանդունի, որդի Զարեհի, վեհ: թագակիր, հզորության դաշնակից, հաղթական փառք ունեցող»¹⁴, Համառոտ տիտղոսաշարն ունի մի քանի տարբերակ, որոնցից մեկը Սպիտակի արձանագրությունում է հանդիպում: Սևանի՝ Կզնուփի (Ղարանլուխ) տիտղոսաշարը ամենակրճատ ձևն ունի. «Արտաշես արքա որդի Զարեհի»: Կարմիր գյուղի (Ղուլալի) և Մակեթարի արձանագրություններում կարդում ենք. «Արտաշես արքա, որդի Զարեհի, Երվանդունի»: Սրանց համեմատությամբ Սպիտակի արձանագրությունում տիտղոսաշարի հերթականությունը քիչ փոփոխված է՝ Երվանդունի տոհմանունը ոչ թե շարքի վերջում է հանդիպում, այլ «արքա» բառից հետո, ապա ավե-

¹¹ Գ. Տիրացյան, Արտաշես I-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 10, էջ 107:

¹² Նման վրիպակների կամ այլադրությունների օրինակներ (DKY-ի փոխարեն DK, ZNH-ի փոխարեն ZN) տե՛ս М. Н. Виноградский, «Словарь арамейских надписей Палестинский сборник», вып. 4, 1959, էջ 236, 237, 1962, էջ 211—212:

¹³ G. Dalman, «Aramaisch-hebraisches Handwörterbuch zu Targum, Talmud und Midrasch, Frankfurt, 1922, էջ 151:

¹⁴ Հանդես, № 4

¹⁴ A. Perikhanian, սշգ. աշխ., էջ 171:

լացված է ընդարձակ շարում վկայված վեհ, բարի պատվանունը: Արտաշեսի տիտղոսաշարի ամենահետաքրքիր առանձնահատկություններից մեկը «րավանդական» — Երվանդունի տոհմանվան առկայությունն է, մի հանգամանք, որի վրա ուշադրություն է դարձվել դեռևս Սևանի Ծակքարի կոթողը հրատարակելիս: Գրավոր աղբյուրները չեն խոսում ազգակցական որևէ կապի մասին Արտաշեսի ու իրեն նախորդող Երվանդունիների դինաստիայի միջև: Ընդհակառակը, Արտաշեսի և Երվանդ վերջինի միջև գոյություն է ունեցել կատաղի թշնամություն: Ուստի յուրացնելով իր նախորդների տոհմանունը և մտցնելով այն իր տիտղոսաշարի մեջ (ինչպես կրճատ, այնպես էլ ընդարձակ), Արտաշեսը հետապնդել է որոշակի քաղաքական նպատակներ երկրի ներքին և արտաքին կյանքում: Երվանդունիների իրական ազգակցական կապերը Արեմենյանների հետ հնարավորություն էին տալիս Արտաշեսին այդ քայլով հաստատել իր գահակալման օրինականությունը, դիմագրավել Հայաստանի նկատմամբ ոտնձգություններ կատարող Սելևկյաններին:

Սպիտակի արձանագրությունը, այսպես կոչված, կրճատ տիտղոսաշարերից ամենից լիակատարն է պարունակում և, անկախ պատվատիտղոսների հերթականության փոքր խախտումից, նման է Թեղուտի ու Զանգեզուրի արձանագրությունների ընդարձակ տիտղոսաշարի սկզբին:

Արձանագրության երկրորդ, գործնական մասը հողի բաժանման մասին է խոսում ոչ թե գյուղերի միջև, այլ այսինչ գյուղում, այսինչ գյուղի մեջ, որով այն տարբեր երանգ է ստանում: Նման երանգ ունի, ըստ Ի. Ն. Վիննիկովի, նաև Ծակքարի արձանագրության վերջավորությունը: BYN — բեն խոսքի մասը Ի. Ն. Վիննիկովը թարգմանում է որպես նախդիր՝ «մեջ» և ոչ թե մակբայ՝ «միջև», ուստի նրա ընկալմամբ Ծակքարի արձանագրության վերջին տողերը հետևյալ կերպ են պատկերվում. «Բաժանեց հողը (այսինչ) գյուղի մեջ (գյուղում)»¹⁵, որով Ծակքարի արձանագրությունը համահնչյուն է դառնում հրատարակվող արձանագրությանը: Այդպիսին է, հավանաբար, նաև Զանգեզուրի արձանագրության բնույթը, որտեղ գործնական մասը սկզբում է փորագրված: Երկրորդ տողի սկզբում QRY — գյուղ բառի առաջ Ի. Նավեհը առաջարկում է վերականգնել Լ նախդիրը¹⁶, որն այստեղ կարող է տեղի իմաստ ունենալ, բայց Սպիտակի արձանագրության տվյալները

ավելի որոշակի են դարձնում B տեղի նախդիրի առկայության հնարավորությունը, որով պարզվում է, որ Զանգեզուրի արձանագրությունում էլ խոսքը գյուղում, գյուղի ներսում կատարվող բաժանման մասին է:

Թեղուտի արձանագրության մեջ հիշատակվող BNY (BYN) թարգմանվում է «միջև» մակբայով, այնպես, ինչպես նախորդ արձանագրություններում այն թարգմանել են Ա. Բորիսովը, Ի. Դյակոնովն ու Կ. Ստարկովան, Գ. Տիրացյանը: Թեղուտի և Սևանի արձանագրությունների նման մեկնաբանությունը կապված է գյուղ գոյականի թիվը ճիշտ որոշելու հարցի հետ: Այն հանդիպում է երկու ձևով QRY՝ (Թեղուտ և գուցե Զանգեզուր) և QRY (Կղնոթ [QR/Y, Ծակքար QRY կամ QRS և Սպիտակ QR/Y]): Երկու ձևերն էլ արտացոլում են եղակի թիվը: Նման վիճակում կարելի էր հարցը սպառված համարել, քանի որ եղակի թիվը գրված գյուղ գոյականը բացառում է «բաժանեց հողը գյուղերի միջև» թարգմանությունը, եթե շլինեն Ա. Փերիխանյանի ու Ի. Նավեհի բերած QRY՝ և QRY հոգնակի ձևերի օրինակները¹⁷: Մեր նպատակից դուրս է այս մանրամասնությունների մեջ մտնելը, բայց միանգամայն պարզ է, որ Սպիտակի կոթողի վրա հաստատապես B (մեջ) նախդիրն է փորագրված, և ոչ թե BYN մակբայը, մի հանգամանք, որ նոր երանգ է հաղորդում հողաբաժանման գործողությանը:

Հանրագումարի բերելով արձանագրության վերաբերյալ արված մեր դիտողությունները, նշենք նրա առավել կարևոր առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ Արտաշես անվան նոր կերպարը, բաժանել բայի դերբայական ձևը, «մեջ» նախդիրի առկայությունը: Մնացած առանձնահատկությունները, կապված հիմնականում գոյական անունների ոչ ճիշտ օգտագործման հետ (որոշյալ առումի փոխարեն՝ անորոշը) համահնչյուն են մյուս արձանագրություններին: Նման շեղումները ցույց են տալիս, որ շնայած լեզուն արեմենյան կայսրության մեջ տարածված արամեերենն է (Reichsaramaisch), սակայն Հայաստանում այն չի գտնվել իր բնական միջավայրում, չի խոսվել, այլ օգտագործվել է միայն որպես պետական պաշտոնական լեզու: Արամեերենը մյուս հին գրությունների նկատմամբ ուներ մեծ առավելություններ՝ այբբենական բնույթը, դյուրամատչելիությունը, հեշտությամբ փոխադրվող նյութերի վրա (պապիրոս, կաշի) գրելու հնարավորությունը: Դա է պատճառը, որ այդ լեզուն տարածում գտավ հին արևելյան այնպիսի պետության մեջ, ինչպիսին Ասորեստանն էր, և

¹⁵ И. Н. ВИННИКОВ, *նշվ. աշխ.*, պրակ VII. 1962, էջ 220, նաև՝ պրակ IV, 1959, էջ 205.

¹⁶ A Perikhanian, *նշվ. աշխ.*, էջ 174.

¹⁷ Նույն տեղում, էջ 173—174.

գուցե նաև Ուրարտուում¹⁸։ Մեծ նշանակություն ստացավ արամեերենը աքեմենյան կայսրության սահմաններում, որպես պետական լեզու։ Բնական է, որ այդ իրավիճակը պետք է տարածվեր նաև աքեմենյան կայսրության կազմի մեջ մտնող Հայկական սատրապության վրա։ Անուղղակի տվյալներ կան այն մասին, որ Երվանդ սատրապի (մ. թ. ա. IV դարի երկրորդ կես) դիվանատունը օգտագործում էր արամեերենը իր պաշտոնական գրադրությունների ժամանակ։ Իրեն Երվանդունի հորջորջող և այդ միջոցով Աքեմենյանների հետ աղղակցական կապ հաստատելու ձգտող Արտաշեսը, բնականաբար, պիտի ուզեր վերականգնել աքեմենյան գրասենյակային պրակտիկայի հին ավանդները, մանա-

վանդ որ արամեերենի օգտագործումը հունականությունը պարտադրող Սելևկյան տերությանը հակադրվելու միջոց էր։

Սպիտակի նորագյուտ կոթողը, ընդարձակելով Արտաշեսի սահմանաքարերի տարածման շրջանները դեպի պատմական Գուգարքը, մի անգամ ևս հաստատում է նրանց մասին Մովսես Խորենացու հաղորդածի արժանահավատությունը և մեծ նշանակություն ունի հին Հայաստանի ուղիալ-անտեսական կյանքում մ. թ. ա. II դարի առաջին կեսին իրադրվող ուշագրավ միջոցառումներից մեկը՝ հողային ռեֆորմը ճիշտ հասկանալու համար։

Գ. ՏԻՐԱՅՅԱՆ

ՆՈՅՆՄԲԵՐՅԱՆԻ ԲԵՐԴԱՏԵՂԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ

1976 թ. հունվարին Նոյեմբերյանի շրջկենտրոնից 2 կմ հյուսիս-արևելք, շինարարության ժամանակ բացվեցին դամբարաններ, որոնք պատկանում են Նոյեմբերյանի Բերդատեղ կոչվող կիկլոպյան ամրոց-բնակատեղիի նորահայտ մի ընդարձակ դամբարանադաշտի։ Ամրոցը, որ հիշեցնում է ուրարտական տիպի կառույց, Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան առավել ուշ ժամանակաշրջանի շինություններից է։ Հիմնական բնակչությունն ապրել է ամրոցի շրջակայքում, ուր հայտնաբերված են բազմաթիվ կացարանների հետքերը։ Հարթ, տափարակ դադաթ ունեցող բարձունքի հարավ-արևելյան սարահանդին ձգվում է սպիտակ ֆելզիտի քարահանքը։ Յավդք, դամբարանադաշտն ավերել էին այստեղ աշխատած բուլղոզերները։ Մեզ հաջողվեց փրկել միայն որոշ նյութեր ու պեղել շուրջ 10 դամբարան։ Դատելով դամբարանների ձևերից և նրանցում հայտնաբերված հնագիտական նյութերից, պետք է ենթադրել, որ այստեղ թաղումներ կատարվել են մի քանի հարյուր տարի՝ սկսած զարգացած երկաթի դարաշրջանից մինչև վաղ հայկական։ Թաղման իրենց ձևերով դամբարանները տարբեր տիպի են։ Համեմատաբար շատ են ուղղանկյունաձև քարաբեկորները։ Սրանցից ավելի երկարավունները սալիկներով բաժանված

են երկու մասի՝ հանգուցյալների ոտքերի կողմում խեցեղենը դնելու նպատակով։ Դամբարանների առանձին օրինակներ թոնրաձև տեսք ունեն, շրջափակված մանր սալիկներով։

Դամբարանադաշտի նյութերի ուսումնասիրությունը բերում է այն ենթադրության, որ վաղ հայկական տեղաբնիկներն ունեցել են զարգացած երկրագործություն, անասնապահություն, խեցեղործություն։ Մտորեն ներկայացնում ենք Բերդատեղի դամբարանադաշտի հնագիտական հուշարձանները՝ ըստ դամբարանների, անդրադառնալով առավել տիպականներին։

Առաջին դամբարանը կոչմանորոշված է արեւելքից-արևմուտք։ Դամբարանի խեցեղենը, որ պատրաստված է կոշտ ավազախառը կավից, ունի հաստ պատեր և որոշ չափով՝ գունազրկված սև փայլ։ Դամբարանադաշտի խեցիկներից կրթ հատակ ունեցող զնգաձև դավերից ավելի մեծը (աղ. II, 6) ունի սև փայլ։ Նրա փորի պարագիծը ԶI, իսկ բերանի լայնությունը՝ 9 սմ է։ Գավը զարդարուն է։ Բռնակի տակից անցնում են հատիկանման եռաշար նախշեր, իսկ փորի մեջտեղով՝ միմյանց զուգահեռ գծեր, որոնք հատվում են վզի տակից մինչև հատակն իջնող եռանկյունաձև երկրաչափական նախշերով։ Դամբարանում գտնվեցին բրոնզե խողովակաձև զարդեր, շղթաներ, թռչունիկամ օձի գլխի նման օղակաձև բրոնզե ճարմանդ և կոճակներ (աղ. IV, 4)։ Բրոնզե իրերից դամբարանում հանդիպեցին նաև 10 և 11 սմ տրամագծով վահանակներ, որոնք երիզված են նուրբ ու բարակ գծանախշերով։ Նրանցից ամենամեծն ունի հասկանման նախշեր։

Երկրորդ ուղղանկյունաձև դամբարանը շրջափակված էր 7 սմ հաստության սալերով։ Դամ-

¹⁸ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, Ереван, 1950, էջ 26—27; Г. А. Тираццц, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии («Математико-религиозные аспекты», 1972, № 2) հոդվածի «К вопросу о ханцелярии и писце сатрапа» բաժինը։